ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1 **հեռ. +(374 11) 514-240**

№ Հ/569
23-09-2021

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանին
Հարգելի տիկին Դոյդոյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում գտնվող նշված շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգավորումների համաձայն ինքնակամ կառույցները ենթակա են օրինականացման կամ քանդման: Որևէ այլ հնարավորություն, այդ թվում՝ ինքնակամ կառույցում իրականացվող տնտեսական գործունեությունը դադարեցնելու իրավասություն օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված չէ:

Միաժամանակ նշենք, որ ինքնակամ կառույցով ծանրաբեռնված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ապօրինի օգտագործման դադարեցումը հնարավոր է միայն ինքնակամ կառույցի քանդման միջոցով, իսկ քանդման իրականացումը ներկա պահին հնարավոր չէ, քանի որ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով կիրառվել է հայցի ապահովման միջոց և Երևանի քաղաքապետարանին արգելվել է քանդել քննարկվող շինությունը:

Ինչ վերաբերում է Ձեր գրությամբ մատնանշված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերին, ապա դրանք քննարկվող հարցի կարգավորման համար կիրառելի չեն, քանի որ կարգավորում են այլ հարաբերություններ: